

ՄԱՐԻԱ ՍԻՔՍ-ՀՈՀԵՆԲԱԼՔԵՆ

**ԵԶՐԻՆԵՐԻ 72-ՐԴ ՖԻՐՄԱՆԸ.
«ՔՈՂԱՐԿԱԿԱՍ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ»՝
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՍ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

Սկիզբը՝ թիվ Դ., Ե., Թ.

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից մի քանի ամիս առաջ Կենտրոնական տերությունների (Գերմանիա, Օսմանյան կայսրություն ու Ավստրո-Հունգարական կայսրություն) եւ Ռուսաստանի բոլշևիկյան նոր կառավարության միջեւ կնքվեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, որը խախտվեց միայն երկու ամիս անց, երբ երիտթուրքական բանակը հատեց Կովկասի սահմանը՝ հարձակվելով հայկական զորքերի վրա ու գրավելով սահմանամերձ շրջանները: Խաղաղ բնակիչների, այսինքն՝ ինչպես վաղուց հաստատված բնակչության, այնպես էլ փախստականների նկատմամբ շարունակվեցին հալածանքները, իսկ սահմանամերձ գավառները վերածվեցին անմարդաբնակ վայրերի:

Ինչպես նշվեց, որոշ դեպքերում զրուցակիցները հիշում էին իրենց նախնիների՝ հայրենի բնակավայրերը վերադառնալու փորձերի մասին, սակայն [ցեղասպանական] հալածանքների երկրորդ փուլն ստիպեց նրանց կրկին փախուստի դիմել:

Յոթանասունութամյա մի կին¹ այսօր բնակվում է գրեթե լքված սահմանամերձ գյուղում: Նրա ընտանիքն ապրել է սահմանին մոտ գտնվող այս բնակավայրում մինչեւ 1918 թվականի աքսորը: Նրանց գրեթե բոլոր համագյուղացիներն ապաստանել են Հայաստանում, եւ միայն քչերն են մնացել Թուրքիայում: Նա ասում է, որ իրենց փախուստը պայմանավորված է եղել ոչ թե ցեղասպանական հալածանքներով, այլ արտաքսման պատճառով: Նա եւ հարցման գրեթե բոլոր մյուս մասնակիցները հստակորեն զանազանում են հալածանքների տարաբնույթ ռազմավարությունները, ինչպես նաեւ տարանջատում տեղահանությունն ու ցեղասպանական հարձակումները՝ անկախ այն հանգամանքից, թե ովքեր են

¹ Հարցազրույց, 2015 թ. հոկտեմբերի 15:

այդ ամենի իրագործողները՝ զինվորները, հարեւանները, հրոսակախմբերը կամ քրդական վարձու ցեղային ստորաբաժանումները: Զրուցակիցներից ոմանք հիշատակեցին նաեւ, որ իրենց նախնիները հարձակումներից ու արտաքսումներից հետո փորձել են վերաբնակվել իրենց գյուղերում, բայց ստիպված են եղել կրկին փախչել, քանի որ նրանց հետապնդել են երկրորդ անգամ:

Պատերազմական սույն գործողությունների ընթացքում, որոնք այսօր հայտնի են «Բաշ-Ապարանի պատերազմ» անվանումով, երիտթուրքական վարչակարգի զինվորներն ամիսներ շարունակ գրավել են (ներկայիս) Հայաստանի շրջանները: Հայաստանի անկախությունը ձեռք է բերվել 1918 թ. Սարդարապատի ճակատամարտում, երբ հայկական զորքերը, 700 եզդի ռազմիկների աջակցությամբ, կարողացան հետ շարտել երիտթուրքական ուժերին: Հարցման մասնակիցներից ոմանք վկայեցին նաեւ զինագրավման այդ ամիսների ընթացքում կատարված դաժանությունների եւ հատկապես սեռային պատկանելությամբ պայմանավորված բռնությունների մասին:

Էլիզա Ֆոն Յոդեն-Ֆորգեյն ամենայն մանրամասնությամբ դիտարկել է ցեղասպանական բռնությունների երկարաժամկետ հետեւանքները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով նմանօրինակ համայնքների վերարտադրողականության վրա: «Այն փաստը, որ ընտանիքն այդպիսի կենտրոնական տեղ է զբաղեցնում ցեղասպանական դաժանությունների դրսեւորումներում,— գրում է նա,— կարելի է բացատրել ամենատարբեր ձեւերով: Ընտանիքը սոցիալական այն հաստատություն է, որը կազմակերպում է խմբերի կենսագործունեությունը, հետեւաբար ընտանիքի շահագործումն այն ձեւերից մեկն է, որի միջոցով ոճրագործներն արտահայտում են [իրենց] ցեղասպանական վայրագությունը»²: Թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ չպահանջված տեղեկություններ են հաղորդել սեռական բռնության մասին, որը նրանք միշտ արտահայտել են ընդհանուր գծերով՝ այն երբեք չառնչակցելով մասնավոր որեւէ անձին կամ ընտանիքին: Եզդի կանանց նկատմամբ գործադրված սեռական բռնության նպատակը [եզդիական] համայնքի եւ դրա կորիզի բնաջնջումն էր: Համաձայն է. Ռ. Ռեյդ-Քանինգհեմի փաստարկման՝ սեռական բռնությունը

² Sön E. von JOEDEN-FORGEY, The Devil in the Details: “Life Force Atrocities” and the Assault on the Family in Times of Conflict, “Genocide Studies and Prevention: An International Journal”, vol. 5, Iss. 1, 2010, էջ 6, ամբողջական հոդվածը տե՛ս էջ 1—19, <https://doi.org/10.1353/gsp.0.0042>:

«կանանց, ընտանիքների ու համայնքների վրա ունեցած իր կործանարար ազդեցությունների պատճառով հաճախ ցեղասպանական արշավների անկյունաքարն է հանդիսանում՝ պատճառելով մարմնական կամ հոգեմտավոր լուրջ վնասներ, միտումնավոր կերպով ստեղծելով կյանքի այնպիսի պայմաններ, որոնք հաշվարկված են խմբի ֆիզիկական բնաջնջման համար»³։ Բաշ-Ապարանի պատերազմի օրերին բնակավայրերի զինագրավումների ընթացքում [թուրքերը] պարբերաբար առեւանգում էին գյուղերում բնակվող հայ ու եզդի կանանց, որոնց, որպես պատանդների, պահում էին ռազմական ճամբարներում եւ օրեր շարունակ սեռական բռնության ենթարկելուց հետո միայն հետ ուղարկում իրենց գյուղերը։ Թեեւ սույն պատմությունները կապված են որոշակի վայրերի հետ, եւ մարդիկ հաճախ էին նշում գյուղի մերձակայքում գտնվող այն մասնավոր տեղերը, որտեղ կայանել էին զավթիչները, այդուհանդերձ նրանք սովորաբար դադար էին առնում՝ առանց որեւէ այլ լրացուցիչ ակնարկի, թե ինչ է պատահել այդ կանանց։ Եզդիների՝ պատվի ու խայտառակության մասին պատկերացումների համաձայն՝ նրանք արդեն անարգված էին։ Ինչպես Ու. Լյունգյորն է նկատել, «Ցեղասպանության ժամանակ առեւանգումներն ու բռնի ամուսնությունները սովորական բան էին»⁴։ Հիրավի, դա ճշմարտություն էր եւ հայ, եւ եզդի կանանց պարագայում։ Եզդիական համայնքի համար, որի խմբային ներտոհմային (էնդոգամ) ամուսնության խիստ կանոնների⁵ շնորհիվ պահպանվում է վերջինիս ներտոհմային հասարակական-կրոնական կառուցվածքը, սեռական բռնությունը հարված է համայնքի նյարդին։

ՕՏԱՐ ՍԿՋԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՒ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

Հետպատերազմյան Թուրքիայում թե՛ զինվորները եւ թե՛ գլխավոր ոճրագործները, ինչպիսիք զինվորական հրամանատարներն էին, շրջա-

³ Հմմտ. A. R. REID-CUNNINGHAM, Rape as a Weapon of Genocide, "Genocide Studies and Prevention: An International Journal", vol. 3, Iss. 3, 2008, էջ 280, ամբողջական տարբերակը տե՛ս էջ 279–296, <https://doi.org/10.1353/gsp.2011.0043>։

⁴ Տե՛ս Ս. Մ. Մ. ÜNGÖR, Orphans, Converts, and Prostitutes: Social Consequences of War and Persecution in the Ottoman Empire, 1914–1923, "War in History", vol. 19, № 2, 2012, էջ 187, ամբողջական հոդվածը տե՛ս էջ 173–192, <https://doi.org/10.1177/0968344511430579>։

⁵ Եզդիական համայնքի պատկանելությունը սահմանված է ծագումնաբանությամբ։ Եզդիականության ընդունումը կամ օտար զուգընկերոջ հետ ամուսնությունն անհնար է եւ հանգեցնում է համայնքից արտաքսմանը։

նառում էին [ցեղասպանության վերաբերյալ] պաշտոնապես հրամցված պատմությունը. զոհերը բնութագրվում էին իբրեւ դավաճանների ու խառնակություն առաջացնողների խմբեր: Ճգնաժամների, պատերազմի եւ անկումների ժամանակաշրջանում տրամաբանական հետեւանքն ու միակ հնարավոր ռազմական հակազդեցությունը, ինչպես ենթադրվում էր, կտրուկ միջոցների ձեռնարկումն էր⁶: Տարածաշրջանային քաղաքացիական ծառայողներին պարտադրել են իրագործել ռազմական հրամանները. նրանք, ովքեր փորձել են դիմադրել, սպանվել են⁷:

Տասնամյակներ շարունակ օսմանյան արխիվային փաստաթղթերի հասանելիությունը սահմանափակված էր. միայն վերջին տասնամյակի ընթացքում հնարավոր եղավ նմանատիպ վավերագրերի հիման վրա ձեռնարկել ինչ-որ հետազոտությունների⁸: Հայ եւ ասորի ժողովուրդների ցեղասպանություններին նվիրված ակադեմիական ուսումնասիրությունները երբեմն նաեւ տեղեկություններ են բովանդակում եզդիների ճակատագրի վերաբերյալ: Ինչպես Հ. Կայզերն է ընդգծել, 1908 թ.՝ Երիտթուրքական հեղափոխությունից հետո, Դիարբեքի թաղաքապետը պատվիրել է սպանել այն եզդիներին, որոնք բնակություն էին հաստատել քաղաքից արեւմուտք ընկած տեղանքում⁹ եւ Վիրանշեհիր¹⁰ քաղաքում¹¹: Դիարբեքի Նահանգում անիշխանության (անարխիա) վիճակը շարունակվել է մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը: Դ. Գանթը համեմատել է ազգագրական առումով առավել փոքր կրոնական համայնքների՝ ասորիների

⁶ Տէս Ս. Ս. ÜNGÖR, նշ. աշխ., 2011, էջ 63:

⁷ Նույն տեղում, էջ 80:

⁸ Տէս, օրինակ, E. GÖLBAŞI, The Yezidis and the Ottoman State: Modern Power, Military Conscription, and Conversion Policies, 1830–1909, Istanbul: Boğaziçi University, 2008, և A. GÖKÇEN, Notes from the Field: Yezidism: A New Voice and an Evolving Culture in Every Setting, trans. by Caroline Tee, “British Journal of Middle Eastern Studies”, vol. 37, № 3, 2010, էջ 405–427, <https://doi.org/10.1080/13530194.2010.524442>:

⁹ Տէս H. KAISER, The Extermination of Armenians in the Diarbakir Region, in: “Let Them Not Return”, ed. by D. Gaunt, N. Atto & S. O. Barthoma, Istanbul: Bilgi UP, 2014, էջ 14, և D. GAUNT, Sayfo Genocide. The Culmination of an Anatolian Culture of Violence, in: “Let Them Not Return”, ed. by D. Gaunt, N. Atto & S. O. Barthoma, Istanbul: Bilgi UP, 2014, էջ 64:

¹⁰ Հայտնի է նաեւ Վիրանշեհր անունով. գյուղ պատմական Փոքր Հայքում՝ Սեբաստիայի գավառի Սեբաստիա քաղաքի մոտ: Նույնացվում է հին Զապետրա ամրոցի հետ (տես Թ. ՀԱՅՈՒՅԱՆ, Ս. ՄԵԼԻՔ-ԲԱՆՇԱՆ, Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 4-րդ, Երեւան, 1998, էջ 807, ծնթ.՝ թրգմ.):

¹¹ Տէս D. GAUNT, Sayfo Genocide, 2014, էջ 54 և էջ 64:

ու եզդիների դեմ ձեռնարկված նախապատրաստությունների ռազմավարությունները եւ ներկայացրել նրանց՝ քրդական ցեղերի հետ դաշինքներ ձեւավորելու առնչությամբ [թուրքերի շրջանում] առկա մտավախությունը¹²:

Ականատեսների ու երրորդ կողմի անձանց՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում ազգերի համադաշնությունը ներկայացնող դիվանագիտական դիտորդների կամ գինվորական բարձրաստիճան սպաների վկայություններում գրեթե երբեք խոսք չի լինում եզդիների ճակատագրի մասին: Հարի Զարիզ Լյուբը եւրոպացի այն սակավաթիվ դիվանագետներից է, որը հաղորդումների եւ [մասնավոր] հրապարակումների միջոցով նկարագրել է հալածանքների ծավալները: Որպես բրիտանական գաղութատիրության նախարարության պաշտոնյա՝ նա մի քանի անգամ այցելել է Թուրքիա. պատերազմի ընթացքում նրան ծառայության են ուղարկել Լեւանտում¹³ տեղակայված արքայական նավատորմ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ նախքան Անդրկովկասի (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) գլխավոր կոմիսար դառնալը, նա կարճ ժամանակով նշանակվել է Ֆամագուստայի¹⁴ կոմիսարի պաշտոնում: Զ. Լյուբը լայն գիտելիքներ ուներ տարածաշրջանի մասին եւ քաջատեղյակ էր եզդիների ճակատագրին: Իր «Մոսուլը եւ նրա ազգային փոքրամասնությունները» գրքում նա հիշատակում է Առաջին աշխարհամարտից առաջ եւ դրա ընթացքում եզդիների նկատմամբ կազմակերպված դաժան հալածանքների մասին: Սինջարում ստեղծված իրավիճակի առնչությամբ նա գրում է. «Եզդիների կոտորածներ տեղի են ունել 1892 թ. եւ Մեծ պատերազմի ընթացքում: Այժմ, ներառյալ՝ Անդրկովկասում ապրող եզդիները, չի կարող լինել ավելի քան 50 000 փրկված մի ռասայից, որի

¹² Նույն տեղում, էջ 62:

¹³ Լեւանտ անվանումը ծագել է ֆրանսերեն «Levant» կամ իտալերեն «Levante» բառերից եւ նշանակում է Արեւելք: Միջերկրածովյան տարածաշրջանի արեւելյան հատվածի երկրները (Սիրիա, Լիբանան, Իսրայել, Հորդանան, Եգիպտոս, Թուրքիա (պատմական Մեծ Հայքի հարավարեւմտյան մասը) դեռեւս ուշ միջնադարից հայտնի էին այդ ընդհանուր անունով (Լեւանտին վերաբերող մատենագիտությունը տես J. CHATZIPANAGIOTI-SANGMEISTER, Griechenland, Zypern, Balkan und Levante. Eine kommentierte Bibliographie der Reiseliteratur des 18. Jahrhunderts, Band 1—2, Eutin: Lumpeter & Lasel, 2006, ծնթ.՝ թրգմ.):

¹⁴ Ֆամագուստան քաղաք է Կիպրոսի արեւելյան ափին՝ ներկայիս Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության տարածքում: Այստեղ է գտնվում նաեւ Գանչվոր Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցին (1346 թ.), որտեղ ժամանակին ապրել ու ստեղծագործել է նաեւ Ներսես Լամբրոնացին (ծնթ.՝ թրգմ.):

ներկայացուցիչների թվաքանակը հարյուր տարի առաջ ավելի քան մեկ քառորդ միլիոն էր»¹⁵։

Իրականում Չ. Լյուքի նկարագրությունը չափազանց սահմանափակ է տվյալ ժամանակահատվածի խիստ բազմատեսակ հանգամանքները բացատրելու համար, հատկապես, երբ եզդիների վիճակը Սինջարում, որը եզդիաբնակ միավորված վերջին տարածաշրջանն էր, միանգամայն տարբեր էր Օսմանյան կայսրության հյուսիսարևելյան նահանգներում բնակվող նրանց հավատակիցների դրությունից։ Սինջարում կային նաև եզդիական ցեղային զինյալ ուժեր, որոնք ոչ միայն պաշտպանում էին Սինջարի բնակիչներին, այլև ապաստարաններ ու կացարաններ էին տրամադրում փախչող քրիստոնյաների խմբերին։ Սեփական կազմակերպություններ ունենալու, ճամփորդական երթուղիներն ու քարավանային արահետները վերահսկելու կամ բրիտանական գաղութատիրական ուժերին դաշնակցելու քաղաքականության հետ մեկտեղ նաև զինված լինելու գործոններով պայմանավորված այս գրեթե ինքնավար կարգավիճակն արտացոլում էր բացառիկ այն դերակատարությունը, որն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ վերապահվել էր եզդիական սուլն առանձնահատուկ համայնքին։ Լյուքի մեկնաբանությունները կարելու է են այնքանով, որ նրա հրապարակումը, ի լրումն քարոզիչների մի քանի զեկուլյցների (հրատարակված տասնամյակներ անց), սակավաթիվ այն օտար սկզբնաղբյուրներից մեկն է, որը վավերագրում է Օսմանյան կայսրությունում իրագործված բնաջնջման քաղաքականությունը։ Թեև նա ականատես է, այդուհանդերձ տեղյակ է եղել հալածանքների մասին եւ չի լռել կամ անտեսել դրանք։

Դիվանագիտական զեկուլյցներում եզդիներին հիշատակել են միայն այն դեպքերում, երբ նրանք նախաձեռնել են խռովություններ կամ ապստամբություններ¹⁶, սակայն դրանցում որեւէ խոսք առկա չէ եզդիների

¹⁵ Տե՛ս SIR H. LUKE, Mosul and its Minorities, London: Hopkins, 1925, էջ 128; Տե՛ս նաև նույնի, An Eastern Chequerboard, London: Lovat, 1934, էջ 266: Նրա մատնանշած թվերը հիմնավորված չեն պաշտոնական որեւէ վիճակագրական տեղեկություններով, եւ հետևաբար դրանք լոկ մոտավոր հաշվարկներ են։

¹⁶ Տե՛ս Y. TERNON, MARDIN 1915-Anatomie pathologique d'une destruction, "Revue d'Histoire Arménienne Contemporaine", t. IV, 2002, էջ 231, <http://www.imprescriptible.fr/rhac/tome4/12-r6>, ինչպես նաև՝ J. S. GUEST, Survival among the Kurds: A History of Yezidis, London & New York: Kegan Paul International, 1993, և N. FUCCARO, Communalism and the State in Iraq: The Yazidi Kurds, c. 1869–1940, "Middle Eastern Studies", vol. 35, № 2, 1999, էջ 1–26:

նախապատմության ու նրանց անբարենպաստ վիճակի վերաբերյալ¹⁷։ Երբ ուսումնասիրում ենք ավստրո-հունգարական դիվանագիտական զեկուցագրերը՝ ուղարկված Օսմանյան կայսրության արեւելյան հատվածից, որտեղ տեղակայված են եղել զինվորականներ ու հյուպատոսարաններին կցված սպաներ, ապա տեսնում ենք, որ միայն երկու իրադարձություն է խթան հանդիսացել եզդիների վերաբերյալ զեկուցյուներ ներկայացնելու համար, մինչդեռ հալածանքների ենթարկված քրիստոնեական համայնքների ճակատագրի առնչությամբ առկա են ծավալուն փաստագրություններ։ Առաջին, երբ կարծում էին, որ եզդիները վտանգ են ներկայացնում ռազմական գործողությունների համար, նրանց հիշատակում էին քրդերի հետ միասին՝ սովորաբար հստակորեն չտարբերելով վերջիններից։ Երկրորդ՝ Սինջարի (եզդիական բնակավայրերի հարավային շրջան) եզդիների մասին հաղորդվում են տեղեկություններ, որոնք սերտորեն առնչվում են 1915 թ. եւ հետագայում Զեբել-Սինջարում¹⁸ ապաստանած հայերի հանդեպ՝ մինչ այդ գործադրված հալածանքների նկարագրություններին¹⁹։ Ֆրանսիացի պատմաբան Իվ Տերնոն²⁰ ուսումնասիրել է ականատես փրկվածների վկայությունները, որոնք ապաստան էին գտել Սինջարում։ Ցեղի առաջնորդ Համմո Շերուն եւ եզդիների մյուս ներկայացուցիչները ոչ միայն պաշտպանում էին Սինջար հասած քրիստոնյա գաղթականներին, այլ նաեւ դարանակալում Սիրիական անապատ ուղարկված տեղահանվածների քարավաններն ու փրկում նրանց։ Սինջարի նահանգը համեմատաբար անվտանգ ապաստարան էր

¹⁷ S. J. LEPSIUS, Deutschland und Armenien 1914—1918: Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam: Tempelverlag, 1919; Տէս Նաեւ Մոսկուում գտնված Գերմանիայի ներկայացուցիչ Հոլշտայնի՝ Զեբել-Սինջարում եզդիների բարձրացրած ապստամբությունների վերաբերյալ ճեպագիրը՝ թվագրված 1915 թ. հուլիսի 28-ով՝ ուղղված Կ. Պոլսում տեղակայված Գերմանիայի դեսպանատանը։

¹⁸ Զեբել-Սինջարը կամ Զաբալ-Սինջարը 100 կիլոմետր երկարությամբ մի լեռնաշղթա է, որը գտնվում է Իրաքի հյուսիսարեւմտյան եւ Սիրիայի հյուսիսարեւելյան հատվածներում։ Շրջակա տափաստանային հարթավայրերի մակերեսովից ունի 1463 մ բարձրություն։ Եզդիների համար Զեբել-Սինջարը սրբազան լեռ է, որի շրջակայքում սփռված են եզդիական բազմաթիվ բնակավայրեր։ Ներկայումս այն գտնվում է Իրաքյան Քուրդիստանի տարածքում (սուլնի առնչությամբ առավել մանրամասն տես «Словарь географических названий зарубежных стран», отв. ред. А. М. Комков, 3-е изд., Москва: Недра, 1986, էջ 336, ինչպես նաեւ E. SAVELSBERG, S. HAJO & I. DULZ, Effectively Urbanized: Yezidis in the Collective Towns of Sheikhan and Sinjar, “Études Rurales”, №186, 2010 (juillet-décembre), էջ 101—116, եւ այլն, ծնթ.՝ թրգմ.):

¹⁹ S. Austrian State Archives: HHSTA, PA; Liasse Krieg 21a, 946:

²⁰ S. Y. TERNON, MARDIN 1915, էջ 231:

հալածանքի ենթարկվող քրիստոնյաների խմբերի համար²¹։ Նրանց այնտեղ պաշտպանում էր եզդիական համայնքը, որը հետագայում նույնպես ենթարկվեց ռազմական սպառնալիքների ու հարձակումների²²։ Համաձայն 1917 թվականի մի զեկուլյցի նկարագրություն՝ «հրացաններով զինված զգալի ուժեր ուղարկվեցին Ջաբալ։ Թալ Աֆարիներն ու շրջակայքի արաբական ցեղերը ոտքի ելան նրանց (այսինքն՝ եզդիների) դեմ, եւ երբ վերջիններիս գիմադրությունը հեշտությամբ հաղթահարվեց, նրանց գյուղերն ավերվեցին, ու նրանց գույքը մեծածախ վաճառքի հանվեց»²³։

Մի քանի տասնամյակ անց ամերիկացի մարդաբան Հենրի Ֆիլդը²⁴ նույնպես հիշատակել է Սինջարում փրկված քրիստոնյա փախստականներին, որոնց փրկությունը նախաձեռնել էր եզդիների առաջնորդ Համմու Շերուն։ Համընդհանուր այս հիշողությունը տասնամյակներ շարունակ պահպանել են եզդիական ու քրիստոնեական համայնքները, ինչպես նաեւ արեւմտյան որոշ գիտնականներ։ Այնուամենայնիվ, գրեթե ոչ ոք չի ուսումնասիրել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հենց եզդիներին բաժին ընկած ճակատագիրը։

ՔՈՂԱՐԿԵԼՈՒ, ԼՌՈՒԹՅԱՆ ՄԱՏՆԵԼՈՒ ԵՒ ՀԻՇԵԼՈՒ [ՊԱՏՃԱՌՆԵՐԸ]

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ցեղասպանությունները քննարկող միջազգային քաղաքական ու գիտական շրջանակները հազվադեպ են կենտրոնանում [բնաջնջման ծրագրում] ընդգրկված ցեղային ու կրոնական բոլոր խմբերի վրա։ Հայոց ցեղասպանության առնչությամբ քննարկումները հաճախ ստվերում են եզդիներից բացի նաեւ այլ ժո-

²¹ Առավել մանրամասն տե՛ս J. S. GUEST, Survival among the Kurds..., 1993, եւ N. FUCCARO, Communalism and the State in Iraq..., "Middle Eastern Studies", vol. 35, № 2, 1999, էջ 1—26։

²² Տե՛ս SIR H. LUKE, An Eastern Chequerboard, էջ 267։

²³ Տե՛ս "Civil Administration of Mesopotamia", "Review of the Civil Administration of Mesopotamia", London: Stationery Office, 1920, էջ 50։

²⁴ Տե՛ս H. FIELD, The Anthropology of Iraq: The Lower Euphrates-Tigris Region, "Anthropological Series", vol. 30, part I, № 2, Chicago: Field Museum of Natural History, 1949։ Հենրի Ֆիլդը 1930-ական եւ 1940-ական թթ. հետազոտություններ է իրականացրել Իրաքում եւ դարձել ԱՄՆ նախագահ Ֆ. Դ. Ռուզվելտի մարդաբանության հարցերով խորհրդականն ու անդամագրվել Սպիտակ տան հետախուզական հատուկ ստորաբաժանմանը։ Նա տարաբնույթ ուսումնասիրություններ է կատարել Մերձավոր Արեւելքում։

ղովուրդների՝ ասուրիների, ուղղափառ ասորիների, քաղղեացիների եւ հույների հանդեպ իրագործված հալածանքների ու կոտորածների փաստերը²⁵:

Հանիբալ Թրեւիսն ուսումնասիրել է մոտ 250 000 ասուրիների ու քաղղեացիների՝ այն ժամանակ կազմակերպված ցեղասպանությունը եւ ապացուցել, որ այս ոճրագործությունները լուծյան մատնելու նպատակով գործնականում գոյություն են ունեցել [հատուկ մշակված] ռազմավարություններ. «...Ազգային անվտանգության անառարկելի դրույթների (դոգմա), պատմական հիշողության կորստի, ցեղասպանության համընդհանուր պատկերի առնչությամբ քաղաքականացված մեկնաբանությունների եւ համընդհանուր ուժային քաղաքականությունների արդյունքում ցեղասպանությունները կարող են «քողարկվել»»²⁶: Թուրքիայում լուծյան ու ժխտողականության խախտումը գրեթե անհնարին էր եւ է նույնիսկ հայկական՝ միջազգայնորեն ազդեցիկ սփյուռքի համար: Ի տարբերություն տարածաշրջանի քրիստոնյաների՝ եզդիները չունեն համադրելի որեւէ շահախումբ (լոբբի) կամ Եկեղեցու միջոցով ձեւավորված անդրազգային ցանցեր:

Խորհրդային Հայաստանում ստալինյան [բռնապետության] ժամանակաշրջանում, ինչպես նաեւ հետագայում ստեղծված քաղաքական հանգամանքների արդյունքում եզդիները դարձան զգուշավոր՝ սույն խնդիրները հասարակության մեջ քննարկելու հարցում: Ստալինյան իշխանության օրոք հնարավոր չէր խոսել հասարակական ճարտարագիտության, հալածանքների ու տեղահանությունների հետ առնչվող անցյալի քաղաքական բռնությունների մասին: Նույնիսկ Հայոց ցեղասպանությունն էր արգելված նյութ, քանի որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած ցեղասպանության վերաբերյալ տեսության զարգացումը թույլ կտար դրա ու ստալինյան Խորհրդային Միության տարածքում կազմակերպված հալածանքների եւ զանգվածային բռնությունների միջեւ զուգահեռներ անցկացնել²⁷: Միայն հինգ տասնամյակ անց՝ 1965 թվականին, Խորհրդային Միությունը պաշտո-

²⁵ Առավել մանրամասն տե՛ս “Late Ottoman Genocides...”, ed. by D. J. Schaller & J. Zimmerer, 2010:

²⁶ Տե՛ս H. TRAVIS, Native Christians Massacred: The Ottoman Genocide of the Assyrians during World War I, “Genocide Studies and Prevention: An International Journal”, vol. 1, Iss. 3, 2006, էջ 327–372:

²⁷ Սույնի առնչությամբ տե՛ս, օրինակ, “The Armenian Genocide: Wartime Radicalization or Premeditated Continuum”, ed. by R. G. Hovannisian, New York: Routledge, 2017:

նապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Դրանից բացի՝ ստալինյան իշխանության օրոք քաղաքականապես անցանկալի մարդիկ, օրինակ՝ ազգայնական քաղաքական հայացքներ կրող անհատները կամ իրենց սեփական ազգային ու կրոնական խմբերի ներսում ազդեցիկ դիրքեր զբաղեցող մարդիկ, ինչպիսիք, օրինակ, եզդիական ցեղերի զորեղ առաջնորդներն ու կրոնական ներկայացուցիչներն էին, ուղարկվում էին գուլագ²⁸, եւ նրանք երբեք չէին վերադառնում այնտեղից:

Սույն չարագործությունները հերքելու եւ դրանք ամբողջությամբ լուծված մատենելու ռազմավարությունն իրագործել է Օսմանյան կայսրության իրավահաջորդ պետությունը՝ Թուրքիան: Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած ցեղասպանություններից հետո անցումային արդարադատության²⁹ որեւէ ձեւ երբեք չի կիրառվել: Հստ Զ. Սայդըրի՝ հիշողությունների ձեւավորման գործընթացում լուծվումը ուժային փոխհարաբերությունների հիմնատարրն է. լուծվումը «կա-

²⁸ Ռուսերեն սույն՝ «ГУЛАГ» հապավումը թարգմանաբար նշանակում է «ճամբարների եւ կալանավայրերի գլխավոր վարչություն»։ այն ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության եւ ԽՍՀՄ արդարադատության նախարարության ստորաբաժանում էր, որը 1934–1960 թթ. իրականացնում էր զանգվածային բռնի ազատագրվման ու կալանավորման վայրերի ղեկավարումը (առավել մանրամասն տե՛ս S. G. WHEATCROFT, Victims of Stalinism and the Soviet Secret Police: The Comparability and Reliability of the Archival Data-Not the Last Word, “Europe-Asia Studies”, vol. 51, № 2, 1999, էջ 315–345, ինչպես նաեւ՝ Г. М. ИВАНОВА, История ГУЛАГа, 1918–1958: социально-экономический и политико-правовой аспекты, Москва: Наука, 2006, եւ այլն, ծնթ.՝ թրգմ.):

²⁹ Անցումային արդարադատությունը մարդու իրավունքների զանգվածային խախտումների ժամանակաշրջանի հետ կապված ժառանգության հաղթահարման դատական եւ ոչ դատական միջոցառումների մի համակարգ է: Նման միջոցառումներն ընդգրկում են քրեական հետապնդում, իսկություն պարզման հանձնաժողովներ, փոխհատուցման ծրագրեր եւ բազմաթիվ հանրակարգային այլ բարեփոխումներ: Անցումային արդարադատությունն ունի երկու գլխավոր նպատակ. առաջին՝ հաստատել որոշակի մակարդակի արդարություն, եւ երկրորդ՝ վերահաստատել խաղաղություն, ժողովրդավարություն եւ հարաբերությունների վերականգնում, որոնց հասնելու համար անցումային արդարադատության գործիքակազմն իր մեջ կարող է պարունակել քրեական, վերականգնողական եւ հասարակական արդարադատության տարրեր: Անցումային արդարադատությունն արդարադատության հատուկ եղանակ չէ: Այն հարմարեցվում է այն եզակի դեպքերին, երբ հասարակությունների անցումային փուլերում լինում է ժամանակշրջան, երբ արձանագրվում են մարդու իրավունքների զանգվածային խախտումներ: Որոշ դեպքերում այն կիրառվում է միանգամից՝ ունենալով խոր հետեւանքներ, իսկ մյուս պարագաներում կարող է կյանքի կոչվել միայն տասնամյակներ անց (առավել մանրամասն տե՛ս նաեւ Э. СОТТАС, Правосудие переходного периода и санкции, «Международный Журнал Красного Креста», т. 90, № 870, 2008, էջ 225–263, ինչպես նաեւ՝ “Transitional Justice and Dealing with the Past”, in: “Berghof Glossary on Conflict Transformation. 20 notions for theory and practice”, Berlin: Berghof Foundation, 2012, եւ այլն, ծնթ.՝ թրգմ.):

րող է եւ պարտադրված, եւ ընտրված լինել»³⁰։ Լուռությունը կարող է լինել ինչպես գոյատեւման ռազմավարություն, այնպես էլ վերահսկողության համակարգ։ Ներկայացված դեպքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ոչ թե առանձին անհատներն են քողարկել ու լուռության մատնել փորձառված վայրագությունները, այլ խորհրդային վարչակարգն է պարտադրել լուռության քաղաքականությունը, որի արդյունքում ճակատագրական սույն պատմությունը վերածվել է «հանրային գաղտնիքի»։

Մայրահեղ բռնության հաղթահարումից հետո Միշել-Ռոլֆ Թոլույոն³¹ սահմանել է տեղեկատվության վերականգնման չորս քայլ. «Փաստերի ստեղծում (սկզբնաղբյուրների պատրաստում), փաստարկների հավաքագրում (արխիվի ստեղծում), դեպքերի վերականգնում (պատմությունների նախապատրաստում) եւ հետադարձ նշանակություն (վերջնական եզրահանգումների հիմամբ պատմության մշակում)»³²։ Եզդիների պարագայում այն իրողությունը, որ պատմությունների մշակումը՝ ներառյալ հուշերի կամ նոթերի տեսքով մի քանի հրատարակությունները, հակառակ նրանց՝ կիսահանրային ոլորտում գտնվելու հանգամանքի, կարող էր կատարվել նույնիսկ խորհրդային Միության վերջին տասնամյակներում, վկայում է այն մասին, որ համաձայն Թոլույոյի համակարգի՝ ընտանեկան սույն պատմությունները կազմակերպվել³³ ու վերածվել են

³⁰ Տէս "Between History and Histories: The Making of Silences and Commemorations", ed. by G. Sider & G. Smith, Toronto: University of Toronto Press, 1997, էջ 17:

³¹ Տէս M.—R. TROUILLOT, Silencing the Past: Power and the Production of History, Boston: Beacon, 1995:

³² Միշել-Ռոլֆ Թոլույոյի հիշյալ երկից բեված սույն մեջբերումը տրված է ըստ հետեւյալ հրատարակության՝ A. G. ALTINAY, Gendered Silences, Gendered Memories: New Memory Work on Islamized Armenians in Turkey, "L'Homme. Zeitschrift für Feministische Geschichtswissenschaft", Band 24, Heft 2, 2013, էջ 78, <https://doi.org/10.7767/lhomme.2013.24.2.73>:

³³ Իրաքում բնակվող եզդիների պատմությունների հետ համեմատությունների առնչությամբ տես C. ALLISON, նշ. աշխ., 2013: Հարկ ենք համարում նշել, որ բնագրում սույն հղումը թերի է, քանի որ հոգվածագիրը, առաջին անգամ հղելով Ք. Էլիսոնի՝ 2013-ին հրապարակած նյութին, չի նշել երկի կամ հոգվածի ամբողջական տվյալները: Փնտրտուքի արդյունքում գտել ենք նրա՝ 2013-ին հրատարակած հետեւյալ հոգվածները՝ C. ALLISON, From Benedict Anderson to Mustafa Kemal: Reading, Writing and Imagining the Kurdish Nation, in: "Joyce Blau: L'éternelle chez les Kurdes", ed. by H. Bozarslan & C. Scalbert-Yücel, Paris, 2013, էջ 101–133, ինչպես նաեւ՝ նույնի, Addressivity and the Monument: Memorials, Publics and the Yezidis of Armenia, "History and Memory", vol. 25, № 1, 2013, էջ 145–181, <https://doi.org/10.2979/histmemo.25.1.145>, եւ նույնի, Memory and the Kurmanji Novel: Contemporary Turkey and Soviet Armenia, in: "Remembering the Past in Iranian Societies", ed. by C. Allison & P. G. Kreyenbroek, Wiesbaden: Harrassowitz Verlag, 2013, էջ 189–218: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ շարադրանքում խոսքը վերաբերում է խորհրդային Միության եւ հատկապես խորհրդային Հայաստանի եզդիներին,

«փաստերի հավաքագրման»։ Թեեւ եզդիների հիշողությունները զուգահեռ են հայերի ձեռք բերած փորձառություններին, եւ Հայոց ցեղասպանության շուրջ բուռն քննարկումներ են ծավալվել, այդուհանդերձ մինչ օրս Հայաստանում եւ եզդի բնակչություն ունեցող այլ երկրներում պաշտոնապես չի ճանաչվել եզդիների ցեղասպանությունը։

Ցեղասպանական հալածանքների երկարատեւ «քողարկմանը» նպաստած արտաքին գործոններն իրենց մեջ ներառում էին ոճրագործների՝ տասնամյակներ տեւած լուծությունն ու ժխտողականությունը, արխիվային վավերագրերի անհասանելիությունը, Հայոց ցեղասպանության ժխտումն ու մյուսներին լուծություն պարտադրելը, ինչպես նաեւ Թուրքիայում այդ նյութին վերաբերող որեւէ ուսումնասիրություն կատարելու կամ հրապարակում անելու համար երկարաժամկետ ազատագրկման սպառնալիքը։ Թուրքիայում մնացած եզդիական համայնքները շարունակաբար բախվել են հալածանքի ու արտաքսման քաղաքականություններին, ինչը 1960-ական թվականներից հանգեցրել է բռնի արտագաղթմանը դեպի եւրոպական երկրներ։

Եզդիական կրոնական համայնքի կենտրոնացումը բանավորության վրա եւ անգրագիտության բարձր ցուցանիշները, ինչպես նաեւ Թուրքիայում, Նիդրլանդում եւ հատկապես հետստալինյան ժամանակաշրջանի խորհրդային Միության տարածքում սույն հարցի մասին բարձրաձայնած գիտնականների կամ պատմաբանների համեմատաբար փոքր թվաքանակն այն ներքին գործոններն են, որոնք նպաստել են այս հալածանքների քողարկված բնույթին։ Խորհրդային Միությունում եզդիները հայտնվել են անորոշ իրավիճակում։ Չնայած նրանց լեզվի եւ բանահյուսական ավանդույթների վերարժեւորմանը՝ նրանց ճակատագրական անցյալի առնչությամբ պաշտոնական հիշատակության օրինակներ գտնելը կամ ակադեմիական հետազոտություններում այն զարգացնելը գրեթե անհնար էր խորհրդային պետության տարածքում։ Սա ուշագրավ է, քանի որ նրանք հայերի հետ միասին ձեռք են բերել հալածանքների համընդհանուր փորձառություն։

Այսպիսով՝ հիշատակության ուղղությամբ տարվող աշխատանքի ընթացքում միայն վերջին տասնամյակում են կատարվել առաջին քայ-

կարելի է միայն ենթադրել, որ Մ. Սիքս-Հոհենբալքենի հղած աղբյուրը պետք է լինի վերջին երկու ուսումնասիրություններից որեւիցե մեկը (ծնթ.՝ թրգմ.)։

լերը: Հայաստանում եւ արտերկրում ապրող եզդիների ներկայացուցիչներն ու գիտնականները խթանում են պատմական քննարկումը, ինչպես նաեւ հանրային իրազեկվածությունը: Սակայն պարզվեց, որ եզդիների ինքնության ու պատկանելության հարցի շուրջ քննարկումն առավել լայն խնդիր է՝ իր սեփական մարտահրավերներով: Խորհրդային ժամանակաշրջանում հայաստանաբնակ եզդիները խճճվել էին խորհրդային ինքնության տեսությունների եւ ազգային գաղափարախոսությունների միջեւ, որոնք հիմնականում խարսխված էին լեզվախմբերի՝ տվյալ դեպքում քրդերենի քուրմանջի բարբառի³⁴ առանձնահատուկ ձեւերի վրա: Սույն ժամանակահատվածում փոփոխության ենթարկվեցին միջցեղային ու ներցեղային սահմանների ընկալումները, ինչպես նաեւ եզդի կամ քուրդ լինելու հարցադրումները: Մի քանի տասնամյակ շարունակ հայաստանաբնակ եզդիների՝ իրենց մայրենի լեզվով մշակութային ինքնարտահայտման ազատությունը շրջադարձային եղավ՝ հարեւան երկրների՝ Թուրքիայի, Իրաքի, Իրանի եւ Սիրիայի տարածքում առկա քրդական բոլոր համայնքներում դրա բացակայության համեմատությամբ, քանի որ այդ երկրներում քրդերենը, մեծավ մասամբ, արգելված լեզու էր: Ի հակադրություն դրան՝ Խորհրդային Հայաստանը, օրինակ, հիմնեց ռադիոհաղորդում՝ քրդերենով: Քրդական լեզվին ու մշակույթին վերաբերող կրթական ու ակադեմիական սույն ծրագրերից մի քանիսը հիմնված էին Հայաստանում առկա եզդիական սփյուռքի վրա. քանի որ դրանք կարելի էր ստանալ նաեւ հարեւան պետություններում, այդ ծրագրերն աստիճանաբար ներթափանցեցին Մերձավոր Արեւելքի քրդական համայնքներ:

Պատկանելության հարցի շուրջ քննարկումները մեծ ծավալների հասան Խորհրդային Միության փլուզումից հետո³⁵: Այդ ժամանակից ի վեր կրոնական համայնքի ազգայնականացումը³⁶ շարունակական գործըն-

³⁴ Քրդերենի երկու հիմնական բարբառներից մեկը:

³⁵ Սույնի առնչությամբ առավել մանրամասն տես Տ. DALALYAN, Construction of Kurdish and Yezidi Identities among the Kurmanji-speaking Population of the Republic of Armenia, in: “Changing Identities: Armenia, Azerbaijan, Georgia (Collection of Selected Works)”, ed. by Heinrich Böll Foundation South Caucasus, Tbilisi: Heinrich Böll Foundation South Caucasus, 2012, էջ 177–201:

³⁶ Բնագրում հեղինակը կիրառել է անգլերեն «ethnicization» եզրույթը, որի հայերեն ճշգրիտ համարժեքը գոյություն չունի: Սույն հասկացությունը ենթադրում է մի գործընթաց, որի շրջանակում անհատը յուրացնում է ծագումնաբանական իր խմբին հատուկ հոգեւոր արժեքները: Այս ամենը հաշվի առնելով՝ նշյալ բառը թարգմանել ենք «ազգայնականացում»

Թաց է՝ եզդիական պատմության եւ մշակույթի յուրահատուկ հատկանիշներով, որոնք զգալիորեն տարբերվում են քրդական մշակույթից: Հատկապես, թվում է, 2014 թ. օգոստոսին «ԴԱՆՇ»-ի՝ այսպես կոչված՝ Իսլամական Պետության (ԻՊ)՝ Սինջարում եզդիների դեմ նախաձեռնած հալածանքներն ունեցան վճռական դերակատարություն՝ եզդիների պատկանելությունն ու ինքնությունն ընդգծելու համար: Այս առումով որոշիչ էր նաեւ հետեւյալ փաստը. երբ հայտնի դարձավ, որ «ԴԱՆՇ»-ը հարձակվելու է Սինջարի վրա, քրդական փեշմերգայի³⁷ ստորաբաժանումները դուրս բերվեցին Սինջարից՝ առանց քաղաքացիական խաղաղ բնակչությանը որեւէ կերպ նախազգուշացնելու: Եզդիներին թողեցին իրենց բախտի քմահաճույքին՝ առանց փրկության հնարավորությունների կամ ինքնապաշտպանության դիմելու միջոցների: Սինջարում բռնություններից եւ տեւական անապահովությունից ու քաղաքական անկայունությունից հետո, ինչն անհնարին դարձրեց եզդիների վերադարձը, կրոնական համայնքի ազգայնականացման գործընթացն ավելի ամրապնդվեց թե՛ անդրազգային համայնքներում եւ թե՛ Հայաստանում: Եզդիներին ցուցաբերվելիք քաղաքական կամ ռազմական աջակցության բացակայության պատճառով եզդի-(սուննի)քրդական անկայուն փոխհարաբերությունները եւս մեկ անգամ սրված ընթացք են ստացել: Այս խիստ քաղաքականացված համատեքստում 72-րդ Ֆրիմանի³⁸ որպես ցեղասպանության ճանաչման հարցը քննարկվում է Հայաստանում, ինչպես նաեւ եզդիական սփյուռքում:

2015 թվականին՝ Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցին, Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական կարգախոսն էր՝ «Հիշում եմ եւ պահանջում»: [Նույն՝] 2015 թ. ապրիլին Հայաստանի խորհրդարանում եզդիական համայնքը ներկայացնող մի քանի կազմակերպությունների հետ տեղի ունեցավ հանդիպում, որի ընթացքում քննարկվեց այն հարցը, թե արդյո՞ք պետք է Օսմանյան Թուրքիայում եզդիների դեմ գործադրված հալածանքները հռչակել իբրեւ ցեղասպանություն: Հանդիպման մասնակիցները նաեւ հորդորեցին, որ Ազգային Ժողովում ձեւավորվի [համապատասխան] աշխատանքային խումբ³⁹:

եզրույթով, որը, թերեւս, իմաստային առումով ավելի մոտ է հիշյալ հասկացությանը (ծնթ.՝ թրգմ.):

³⁷ Սուլեյմի առնչությամբ տե՛ս «Էջմիածին», 2023, Դ., էջ 83, 55-րդ ծնթ. (ծնթ.՝ թրգմ.):

³⁸ Նույն տեղում, էջ 71, 17-րդ ծնթ. (ծնթ.՝ թրգմ.):

³⁹ Տե՛ս Yekir Media, <http://www.yekirmedia.am/mobile/?page=news&lan=en&id=26027> (վերջին մուտք՝ 21.05.2015 թ.):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում իրականացված դաշտային հետազոտության արդյունքում ստացված փորձառական սույն նյութը թույլ է տալիս Օսմանյան կայսրության ողջ տարածքում կիրարկված բնաջնջման տարբեր ռազմավարությունները համեմատել Ցեղասպանության ներկայիս Համաձայնագրի Բ. հոդվածում մատնանշված ռազմավարությունների հետ: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում օսմանյան իշխանությունների՝ եզդիների դեմ կազմակերպած հալածանքների նպատակը մասնակիորեն կամ ամբողջությամբ եզդիական համայնքի կանխամտածված ոչնչացումն էր: Սույնն իր մեջ ընդգրկում էր խմբի անդամների զանգվածային սպանությունները, մարմնական կամ հոգեմտավոր լուրջ վնասների պատճառումը, ինչպես նաև համայնքի գոյատևման համար անհրաժեշտ կենսապայմանների վերացմանն ուղղված ռազմավարությունները՝ ներառյալ սեռային պատկանելությամբ պայմանավորված բռնությունները, որոնք ուղեկցվում էին համայնքի վերարտադրողականության կենսական ուժի հանդեպ ոտնձգություններով: Եզդի գաղթականները Հայաստանում շարունակաբար վերապրել են բնաջնջման սույն ռազմավարությունները նույնիսկ 1918 թ. խաղաղության գործընթացներից հետո՝ Բաշ-Ապարանի պատերազմի ընթացքում: 2015 եւ 2016 թվականներին Հայաստանում իրականացրած դաշտային ուսումնասիրության ընթացքում հավաքված պատմություններում եզդիներն իրենց նախնիների պատմությունների առնչությամբ բացահայտեցին իրենց իսկ բուռն հուզական հիշողությունները: Հետեւելով 2014 թ. Սինշարում տեղի ունեցած հալածանքների վերաբերյալ լրատվամիջոցների մեկնաբանություններին ու դիտելով փաստավավերագրական տեսանյութերը՝ հարցման մասնակիցները սույն տեսարանները սերտորեն առնչակցում էին իրենց նախնիների փրկության ու տառապանքի պատմությունների հետ: Նրանք ասացին, թե որքան վշտացնող են զգայուն նյութերի՝ իգական սեռին պատկանող նախնիների առեւանգման, ստրկացման ու անհետացման կամ երեխաների որբացման մասին հիշեցումները:

Ժողովրդագրական առումով առավել փոքր կրոնական խմբերը, ինչպիսիք քրդաբնակ շրջաններում բնակվող եզդիներն էին, գտնվում էին քրդական հասարակության «ծայրամասում», միջուկը կազմված էր

սուների մահմեդականներից, որոնք ձեռավորված էին ցեղային կառուցվածքով⁴⁰։ Սոցիալական ու քաղաքական տարաբնույթ փոխակերպումների գործընթացների պատճառով պատկանելության հարցերը բազմիցս վիճարկվել են վերջին տասնամյակներում։ Ինքնությունները երբեք էլ կայուն չեն, այլ գտնվում են բանակցային մշտական գործընթացի մեջ։ Սեփականը եւ ուրիշինը քննարկելու եւ կերտելու համար անհրաժեշտ են մեկ կամ մի քանի երկնմանակներ։ Եզդիների պարագայում առկա են մի քանի բնութագրիչ խմբեր եւ երկնմանակներ՝ Թուրքիայում, Իրաքում, Սիրիայում եւ անդրազգային համայնքներում բնակվող քրդական սուների բնակչության մեծամասնությունը՝ իր քաղաքական տարբեր կողմնորոշումներով, եզդիներով բնակեցված երկրների բնակչության մեծամասնությունը (Թուրքեր, Իրաքցիներ, սիրիացիներ, հայեր, ինչպես նաեւ նախկին Խորհրդային Միության բնակչությունը) եւ եզդիական (քաղաքական) ազդեցության տարաբնույթ խմբավորումները։ Անդամագրման եւ պատկանելության շուրջ բանակցելու համար հարցականի տակ են հայտնվում ոչ միայն ազգային ինքնությունների այս շարքը, այլ նաեւ քաղաքական տարաբնույթ մտադրությունները, որոնք ազդել եւ դեռ ներազդում են եզդիական համայնքների հետ առկա փոխգործակցության վրա։ Սույն քաղաքականությունը նշանավորվեց խտրական ու վիրավորական նախապաշարմունքներով, արտաքսումով, քաղաքական բռնաճնշումներով, ծայրահեղ բռնության արտահայտչաձևերով, նպատակաուղղված կրոնափոխությամբ, տարանջատմամբ (որպես առանձին խումբ Հայաստանում) կամ ընդգրկմամբ (քրդական հասարակության մեջ)՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ո՞րն էր առավել նպատակահարմար։ Վերջինը նաեւ պարունակում էր հարձակողական կամ վիրավորական բաղադրատարր, երբ եզդիները հռչակվեցին իբրեւ քրդական նախասկզբնական կրոնի ներկայացուցիչներ։

Փրկվածների հաջորդ սերունդների շրջանում հիշողության նմանաբնույթ գործընթացների քննությունը, իհարկե, չի կարող փոխարինել արխիվային փաստաթղթերի մանրազնին ուսումնասիրությանը, որը կփաստի հալածանքների ցեղասպանական բնույթի մասին։ Սա-

⁴⁰ S. M. VAN BRUINSEN, Kurden zwischen ethnischer, religiöser und regionaler Identität, in: "Ethnizität, Nationalismus, Religion und Politik in Kurdistan", Heraus. von C. Borck, E. Savelsberg & H. Siamend Savelsberger, Münster: LIT, 1997, էջ 197, ամբողջական հոդվածը տե՛ս էջ 185–216։

կայն հիշողության աշխատանքի⁴¹ վերաբերյալ սույն հետազոտությունը կարող է հստակեցնել ապագայում իրականացվելիք ուսումնասիրությունների անհրաժեշտ շրջանակը: Վերջին հալածանքների մասին հայտնի դարձած պատմությունների ներդրումը քննարկումների մեջ բացահայտում է այն իրողությունը, թե ինչպիսի մարտահրավերների կհանդիպեն ապագայում իրականացվելիք ակադեմիական հետազոտությունները: Պատկանելության շուրջ տեղի ունեցող քննարկումներում առկա է գործիքականացման⁴² վտանգը, եւ հետեւաբար ապագայում կատարվելիք հետազոտություններում առկա տեսական կառուցվածքն ու կիրառական միջոցները պետք է զգուշությամբ քննության առնեն տարածված օրինակները:

Անգլերենից թարգմանությունը՝
ՅՈՒՆԱ ՍԱՐԿՍՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ



⁴¹ Հիշողության աշխատանքն անցյալին առնչվող մի գործընթաց է, որն ունի եւ բարոյաբանական, եւ պատմական դերակատարություն: Հիշողության աշխատանքի ընթացքում պատկեր ստեղծելու գործընթացը կամ այն, ինչ մենք անվանում ենք երեւակայականի արտադրություն, ունի կենտրոնական նշանակություն: Հետեւաբար հիշվող պատմության վերլուծության բանալին հակասություններն են: Սույնը պահանջում է ընդլայնված արխիվ, որն իր մեջ կընդգրկի «բանավոր ու ժողովրդական ավանդույթները», ինչպես նաեւ գրավոր այն ավանդությունները, որոնք սովորաբար կապված են արխիվային վավերագրերի հետ (սույնի առնչությամբ առավել մանրամասն տե՛ս B. GABRIEL, The Unbearable Strangeness of Being; Edgar Reitz's Heimat and the Ethics of the Unheimlich, in: "Postmodernism and the Ethical Subject", ed. by B. Gabriel & S. Ilcan, Montreal & Kingston: McGill-Queen's University Press, 2004, էջ 11, եւ F. Haug, Memory Work, "Australian Feminist Studies", vol. 23, № 58, 2008, էջ 537–541, ինչպես նաեւ՝ L. BASU, Memory Dispositifs and National Identities: The Case of Ned Kelly, "Memory Studies", vol. 4, № 1, 2011, էջ 33–41, եւ այլն, ծնթ.՝ թրգմ.):

⁴² Գործիքականացում (անգլ.՝ «instrumentalization») հասկացությունը մարդու արժանապատվության ոտնահարման տեսակ է, որով բնութագրվում է մարդու որպես գործիքի կամ որեւէ նպատակի հասնելու միջոցի ընկալումն ու վերջինիս հանդեպ համապատասխան վերաբերմունքը (առավել մանրամասն տե՛ս P. KAUFMANN, Instrumentalization: What Does It Mean to Use a Person?, in: "Humiliation, Degradation, Dehumanization: Human Dignity Violated", ed. by P. Kaufman, H. Kuch, C. Neuhäuser, E. Webster, in: "Library of Ethics and Applied Philosophy", vol. 24, Springer, 2011, էջ 57–65, ծնթ.՝ թրգմ.):